16756

P18cpu
1914

361[ԼՈՒՅՍ]
Տ-30

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ՀԱՅ ՉՔԱՒՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ

# „ԼՈՅՍ“

## ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵՒ ՆՐԱ ԴՊՐՈՑԻ

**1911|12 եւ 1912|13 ԹՈՒԵՐԻ**

370
Լ383-Տե
2010

ԹԻՖԼԻՍ
Էլեկտրաշարժ տպարան «ԷՊՈԽԱ» Դուզլեանի փող. № 8.
1914

№ 891
361 [ԼՈՅՍ]
Տ-30
Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
2002

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

## ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅ ԶԲԱՒՈՐ ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ՕԳՆՈՂ «ԼՈՅՍ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

370
Ձ383-Տե

**1911 թ. սեպտ. 1-ից մինչ 1|IX 1913 թ.**

### Վարչութեան կազմը եւ գործունէութիւնը

1911 թուի մայիսի 1-ի Ընդհանուր Ժողովում ընտրուած Վարչութիւնը շարունակեց իր գործունէութիւնը 1911/12 և 1912/13 թուերին. Թէև այդ ժամանակամիջոցում նրա կազմը հետզհետէ պակասեց մի քանի անդամներով, որոնցից մի մասը Թիֆլիսից հեռացան, միւսը ընտանեկան հանգամանքներից ստիպուած դուրս եկաւ Վարչութեան կազմից, բայց և այնպէս Վարչութիւնը, չնայած փոքրաթիւ, սակայն իր վրայ առնելով աւելի աշխատանք, կարողացաւ լրացնել այդ պակասը և ամեն ջանք գործ դրեց Ընկերութեան նիւթական մասը աւելացնելով, կարգաւորել դըպրոցական գործը հնարաւորութեան սահմաններում։ Այս աշխատանքով զբաղուած, սրա հետ և Ընկերութեան՝ սկզբնաւորութիւնից մինչև 1911 թուի Սեպտեմբերի 1-ը տեղեկագրի կազմելու և տպագրելու խնդրով կլանուած, Վարչութեանը հնար չեղաւ ժամանակին Ընդ-

հանուր Ժողով գումարելու, որի համար և խնդրում է Ընդ. Ժողովի ներողամտութիւնը այս առթիւ։

Վարչութիւնը ուրախութեամբ պէտք է արձանագրէ այն փաստը, որ Ընկերութեան նպատակը համակրելի լինելով, քանի գնում, այնքան դէպի իրեն է դարձնում հասարակութեան բանիմաց շրջանների ուշադրութիւնը, որը, ի հարկէ, առաջ է բերում իր օգտակար ազդեցութիւնը։ Այս հանգամանքին պէտք է վերագրել այն նուիրաբերութիւնները, որոնք հետզհետէ շատանում և աւելի ևս յոյս են ներշնչում ապահովելու Ընկերութեան միջոցներով պահւող ձրի դպրոցի վիճակը, որտեղ ուսանում են հարիւրից երբեմն աւելի, երբեմն պակաս— որբ և ամենաչքաւոր հայ երկսեռ մանուկներ։ Վարչութիւնը իր ուշադրութիւնը դարձնելով դպրոցական գործի կանոնաւորութեան վրայ, միւս կողմից աշխատել է աշակերտների ստուգալի աղքատ դրութիւնը թեթևացնելու, օգնելով նրանցից շատերին, ինչով կարողացել է. ճաշով, հագուստեղէնով, ոտնամաններով, դասական պիտոյքներով և այլն։

Ուսումը դպրոցում լինելով ձրի, Ընկերութիւնը բացի այդ, տուել է և տալիս է բոլոր աշակերտներին ամբողջ տարուայ դասական պիտոյքները, միայն նրանք, որոնք շատ թէ քիչ հնարաւորութիւն են ունեցել, բերել են դասական պիտոյքների համար փող. տարեկան 1 րուբլուց մինչև 5 րուբլի, սակայն և այնպէս աշակերտների կէսից աւելին համարեա ազատ է եղել և այդ վճարից։

Եթէ ժամանակին Ընկերութեան միջոցները բարելաւուեն, ցանկալի է, որ բոլորին ազատել և այդ վճարից։ Սոյն տարում, նախորդ տարիների նման, Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան ձրի ճաշարանից օգտուել են դպրոցի ամենայետին չքաւոր աշակերտներից՝ 20 հոգի։

Հագուստեղէնի համար Վարչութիւնը դիմելով բա-



տացել է, աշակերտներին բաժանելու համար, նուէրներ հետևեալներից՝

Առևտ. Տուն «Ա. և Տ. Աֆրիկեան»-ից 117½ արշին չիթ
» » «Եղբ. Բաղդասարեան»-ից 62½ » »
Պ. Կարապետ Խալաթեանից 40 » »
Առևտ. Տուն Աւետիսեաններից 6 գոգնոց

որոնք, ժամանակին կարուելով և պատրաստուելով, բաժանուել են դպրոցի բոլոր երեխաներին (մօտ 100 հոգու) անխտիր, պակասը լրացնելով Ընկերութեան միջոցներից։

Առանձնապէս շնորհակալութեան արժանի են՝ ի դիմաց Առևտ. Տուն «Ա. և Տ. Աֆրիկեան»ի պ. Խաչատուր Աֆրիկեան և պ. Կարապետ Խալաթեան, որոնք ամեն անգամ և ամեն տեսակ օգնութիւն չեն խնայել և իրենց հոգատար վերաբերմունքով դէպի որբ և թշուառ հայ երեխաները խրախուսել են Վարչութեանը։

Ընկերութեան ունեցած գրօսանքներին և տօնածառերին չեն խնայել իրենց օգնութիւնը զանազան նուէրներով հետևեալ Առևտ. հաստատութիւնները և անձինք՝

1) Պ. Ս. Դորոժնով (П. С. Дорожновъ)
2) «Պրովօդնիկ» Ընկերութիւնը
3) Դեղօրայք վաճառող Կովկասեան Ընկերութիւնը
4) Առևտր. Տուն «Փուզինով և Ալիխանով»
5) Պ. Նիկալայ Լիսինով
6) Եղբարք Մաղաքեաններ, Ատովմեաններ, Դադաշեան, որոնց ժամանակին Վարչութիւնը յայտնել է իր շնորհակալութիւնը։

Բացի վերոյիշեալ նուէրներից, Վարչութիւնը ստացել է նուէրներ դասագրքերով և դասական պիտոյքներով տիրուհի Ս. Բագրատունուց, տիկին Մ. Վանցեանից, պ. Մ. Սամուէլեանից, Ա. Աւագեանից, Խաչատուր Ղալէչեանից։ Յանուն բժշկապետ Յ. Աղամեանի պ. Ս. Քամալեանը նուիրել է իր մանկական բոլոր հեղինա-

կութիւններից մի մի օրինակ, որով և հիմք է դրուել դպրոցի գրադարանին, որից յետոյ, նուիրել է գրքեր և տիկ. Վ. Եաղուբեանը։ Արժ. Յ. քահ. Տէր Պետրոսեանից ստացուած է նուէր—դպրոցում կախելու համար, Կայսեր և Կայսրուհու մեծադիր պատկերները ոսկէ շրջանակների մէջ դրած։

Այս բոլոր նուիրատուներին ժամանակին Վարչութիւնը թէ բանաւոր և թէ գրաւոր յայտնել է իր շնորհակալութիւնը։

1911 թուի վերջերին վախճանեցաւ Հայ ազգի մեծ բարերար Աղէքսանդր Մանթաշեանը, որի յիշատակը միշտ թարմ պահելու համար, Վարչութիւնը որոշեց նրա անունով ընդունել իր դպրոցը և պահել երեք հայ որբ երեխայ, որպիսի որոշումը իրագործելով, պահում է հետևեալներին՝ Մարիամ Շէրէշեանցին, Սամսոն Խազխազեանցին և Վրդանէս Վրդոյեանցին։

Հանգուցեալ մեծ բարերարի ժառանգները աչքից չթողնելով «Լոյս» Ընկերութիւնը, նուիրեցին նրան մէկ հազար րուբլի, որի վերայ աւելացնելով և Ընկերութեան ունեցածից մօտ երեք հարիւր րուբլու մի գումար, Վարչութիւնը գնեց Թիֆլիսի քաղաքային Վարկի Ընկերութեան օբլիգացիաներ րուբլի 1500-ի 5%. Пи-тер. II разр. Б. № 17237/1000 ր., № 15615/100 ր. № 15616/100 ր., № 15617/100 ր., № 15618/100 ր., № 15619/100 ր., որպիսի տոկոսաբեր թղթերը Վարչութեան որոշմամբ, իբրև անձեռնմխելի գումար, դրուած են ի պահեստ Թիֆ. Քաղաքային Վարկի Ընկերութեան մէջ 1912 թուի յունվար 25-ին № 7 պահեստի ընկալագրով։

Այսպիսով, 1911/12 թուին եղել են նուիրաբերութիւններ դրամով՝

| | ր. |
|---|---|
| Հանգուցեալ բարերար Աղէքսանդր Մանթաշեանի ժառանգներից | 1000 |
| Իշխանուհի Մարիամ Մ. Թումանեանից | 25 |



| | ր. | ր. կ. |
|---|---|---|
| Պ. Աղէքսանդր Ցիցիկեանից ի յիշատակ իր ամուսնու Ե. Ցիցիկեանի | 25 | |
| Տիկ. Վարսենիկ Եաղուբեանից | 20 | |
| Ա. և Ս. Աւագեան ամուսիններից ի յիշատակ հանգ. Արսէն ա. քահ. Բագրատունու | 25 | |
| Սահակ քահ. և Վարվառէ Սահակեաններից ի յիշատակ հանգ. Արսէն ա. քահ. Բագրատունու | 15 | |
| Մկրտիչ քահ. և Զարիկ Ղազարեաններից ի յիշատակ հանգ. Արսէն ա. քահ. Բագրատունու | 10 | |
| պ. Ե. Օ. Զանազեանից ի յիշատակ Պաւէլ Իվ. Շաղինովի | 15 | |
| Կ. և Վ. Ղլիչեան ամուսիններից ի յիշատակ Շահնանա Մովսիսեանի | 10 | |
| պ. Վասիլ Աւանեանից | 10 | |
| պ. Համբարձում Եսայեանից ի յիշատակ հանգ. Ե. Ռ. Բոզարջեանի | 15 | |
| պ. Բուռնուսուզեանից | 1 | 1171 |

Ստացուած նպաստներ 1911/12-ին

| | | |
|---|---|---|
| Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնից 1911 թուի նպաստը | 100 | |
| Նոյնից 1912 թուի նպաստը | 100 | |
| Թիֆ. Ժողովարանից 1912 թ. նպաստը | 100 | 300 |

Զանազան մուտքեր 1911/12 թուին

| | | | |
|---|---|---|---|
| Անդամակցական վճարներից և դասագրքերից | 311 | 50 | |
| Տօնածառից ընդհանուր մուտք | 678 | 84 | |
| Զբօսանքից » » | 392 | 80 | |
| | 1383 | 14 | 1471 |

| | Ր. | Կ. | Ր. | Կ. |
|---|---|---|---|---|
| | 1383 | 14 | 1471 | — |
| Նուէրներ զբօսանքի առթիւ Վարչ. անդամներից | 75 | 94 | | |
| Թիֆ. II-դ Փոխ. Վարկի Ընկ. պայմանական հաշուով ստացած | 320 | — | | |
| Դրամարկղի մնացորդը առ 1-ն Սեպտեմբերի 1911 թ. | 50 | 86 | 1829 | 94 |
| Ընդհանուր մուտք | | | 3300 | 94 |

1911/12 թուի ելքի յօդուածները՝

| | Ր. | Կ. | Ր. | Կ. |
|---|---|---|---|---|
| Գնուած է Թիֆ. Քաղաք. Վարկի Ընկ. 1500 ր. նոմ. արժ. օբլիգ. | 1283 | 95 | | |
| Սոյն տարուայ դպրոցի դասատուների ռոճիկը | 860 | — | | |
| Դասագրքերի և դասական պիտոյքների համար | 230 | 98 | | |
| Դպրոցական շէնքի տարեկ. վարձը | 96 | — | | |
| Նախկին տեղեկագրերի 800 օրին. զանազան դիմումների, անդամակց. գրքոյկների, նամակների տպագրութեան | 67 | — | | |
| Դպրոցի վառելիքի, ջրի, լուսաւորութեան | 27 | 73 | | |
| Տօնածառը կազմակերպելու ծախք | 248 | 90 | | |
| Զբօսանքը » » | 284 | 86 | | |
| Ապառիկներ, որոնք մուտք են գրուած զանազան անձերից, բայց դեռ ևս ստացուած չլինելով, մնում են զանձելի | 85 | 83 | | |
| Ընդհ. ելքն է | | | 3185 | 25 |
| Դրամարկղի մնացորդը առ 1-ն Սեպ. 1912 թ. | | | 115 | 69 |

Բացի այս մնացորդը, Ընկերութիւնը ունէր



| | Ր. | Կ. |
|---|---|---|
| 2 րդ Փոխադարձ Վարկի Ընկ. մէջ պայմանական հաշուով № 139 | 32 | 92 |

Սոյն տարում Ընկերութիւնը ունեցաւ մի մշտական անդամ՝ Սրբազան Եփրեմ եպիսկոպոս Սուքիասեան։

Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութիւնը այս տարում կատարելով իր 30-ամեայ գործունէութեան յօբելեանը, որոշել էր հիմք դնել ազգային դպրոցական և ուսուցչական ֆօնդի հանգանակութիւն անելով։

«Լոյս» Ընկերութեան Վարչութիւնը միանգամայն համակրելով այդ գեղեցիկ ձեռնարկութիւնը, իր և դպրոցի ուսուցիչների մէջ մի փոքրիկ ժողովարարութիւն կատարեց և հաւաքելով 50 րուբլի «Լոյս» ընկերութեան անունից ներկայացրեց Բարեգործական Ընկերութեան։

Վարչութիւնը մասնակցել է նաև հասարակական բնաւորութիւն ունեցող երևոյթներին՝ այսպէս «Մշակ» լրագրի 40 ամեայ յօբելեանին, մասնակցել է իր առանձին ներկայացուցիչը ունենալով. մասնակցել է մեծ դրամատուրգ Գ. Սունդուկեանցի թաղման սգահանդէսին իր ամբողջ Վարչական կազմով և այլն։

Այսպիսով 1911/12 թ. Վարչութիւնը վերջացրեց յաջող կերպով իր գործունէութիւնը, նիւթական կողմից, յետ ձգելով 1500 ր. մի գումար տոկոսաբեր թղթերով և կանխիկ փող՝ 148 ր. 61 կ. դրամարկղում և բանկում։

Վերջացնելով տեղեկագրի այս մասը, Վարչութիւնը չի կարող առանձնապէս իր շնորհակալութիւնը չյայտնել մեր հասարակական գործիչ յարգելի Պետրոս Քալանթարեանին նրա այն բարի և անկեղծ վերաբերմունքի համար, որ նա ցոյց տուեց դէպի Ընկերութիւնը իր սիրայօժար աջակցութեամբ։

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԱՍԸ

Սոյն 1911/12 ուսումնական տարում «Լոյս» Ընկերութեան դպրոցը տեղաւորուած էր Քարափի Ս. Գէորգ եկեղեցուն պատկանեալ շինութեան վերնայարկում. 5-րդ քաղաքամասում։ Դպրոցական շէնքը վարձուած է հինգ տարի ժամանակով, սկսած 1911 թուի սեպտեմբերի 1-ից, որի համար կայ առանձին գրաւոր պայմանագիր նոյն եկեղեցու երեցփոխի հետ կապած։

Այս տարի դպրոցում պարապմունքները սկսուեցան սեպտեմբերի 9-ին և տևեցին մինչև 1912 թ. մայիսի 26-ը, պարապմունքի օրերը ամբողջ տարում 170 էին։

Դասերը սկսւում էին կանոնաւոր կերպով՝ առաւօտները $8^1/_2$ ժամին և վերջանում 12 ժամ 20 րոպէին. դասերի տևողութիւնը 50 րոպէ էր։

Դպրոցը երկսեռ էր և բաղկացած երկու բաժանմունքից՝ Առաջին և Երկրորդ։

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ա. | բաժանմ. | կային | 47 | հոգի.— | 23 տղայ | և 24 | աղջիկ |
| Բ. | » | » | 38 | » | 17 » | և 21 | » |
| Երկու | բաժ. | կային | 85 | հոգի.— | 40 տղայ | և 45 | աղջիկ |

Տարուայ վերջը տեղի ունեցան թեթև ստուգութիւններ, որից յետոյ Ա. բաժանմունքից փոխադրուեցին Բ. բաժանմունք 33 հոգի - 15 տղայ և 18 աղջիկ. դասարանում մնացին 3 տղայ և 4 աղջիկ։

Բ. բաժանմունքից փոխադրուեցին Գ. բաժանմունք 27 հոգի՝ 11 տղայ և 16 աղջիկ. մնացին դասարանում 5 հոգի՝ 3 տղայ և 2 աղջիկ։ Տարուայ ընթացքում դպրոցը թողել են 13 հոգի. ծնողների ուրիշ քաղաքներ տեղափոխուելու պատճառով։



Ուսուցչական խումբը բաղկացած էր 6 հոգուց՝ 3 վարժուհի և 3 ուսուցիչ, որոնց ցանկը և աւանդած առարկաները ստորյիշուած ցուցակից կերևայ։ Աւագ վարժուհու պաշտօնը կատարել է տիկ. Վարսենիկ Եաղուբեան, իսկ վերակացութեան՝ օր. Վ. Սափարեան և օր. Ա. Յարութիւնեան։

Տարուայ ընթացքում պատահեցաւ մի դժբաղդ դէպք. դպրոցի վարժուհի և վերակացու օր. Վ. Սափարեանը, որ մի տարի ծառայել էր դպրոցին ձրի, վախճանուեցաւ։ Վարչութիւնը այս տխուր հանդիսին մասնակցեց, նրա ընտանիքին ցաւակցութիւն յայտնեց, ապա հանգուցեալի դասերը և վերակացութեան պաշտօնը տարուայ կիսին յանձնեց օր. Ա. Յարութիւնեանին։ Տարուայ ընթացքում և վերջին, դպրոցի աշակերտները ունեցել են զանազան զուարճալիքներ, մասնակցել են ուսուցիչների ղեկավարութեամբ Վարչութեան կազմակերպած տօնածառին, զբօսանքին, էքսկուրսիային և մանկական խաղերին։

Ընկերութեան գործունէութիւնը քանի գնում այնքան համակրութիւն է գտնում հասարակութեան որոշ շրջաններում, և ցանկալի է, որ այս գեղեցիկ գործը օր աւուր զարգանայ և աճի։

## 1911|12 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

| Կարգ. | Անուն և ազգանուն դասատուների | Ի՞նչ առարկաներ են աւանդել և որքան: Կրօն | Հ. լեզ | Ռ. լեզ. | Թուաբ | Երգ. | Նկար. | Ձեռ. | Շաբաթական դասեր. թիւը | Ի՞նչ ցենզ ունեն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տիկ. Վարսենիկ Եաղուբեան | — | 5 | 10 | — | — | 2 | — | 17 | Թիֆ. III իգ. գիմնազ. և 8 րդ դաս. |
| 2 | Ղեւոնդ քահ. Մեհրաբեան | 4 | — | — | — | — | — | — | 4 | Ներսիսեան դպր. ց |
| 3 | Ղեւոնդ քահ. Ալիխանեան | — | 5 | — | 4 | — | — | — | 9 | » » |
| 4 | Արշակ Տէր-Յովսէփեան | — | — | — | — | 4 | — | — | 4 | Օդեսայի բարձր. Регент. երաժ. դ. |
| 5 | Օր. Փառանձեմ Սահակեան | — | — | — | 4 | | — | — | 4 | Թիֆ Մարիամեան օրիորդ. դպ. |
| 6 | Օր. Աննա Յարութիւնեան | — | — | — | — | | — | 2 | 2 | Հայուհ. Բ. Ընկ. Ձեռագ. դպ. |
| | | 4 | 10 | 10 | 8 | 4 | 2 | 2 | 40 | |

## 1911|12

| Ի՞նչ առարկաներ են անցել | Շաբաթական: Որքա՞ն դաս I բաժ. | Որքա՞ն դաս II բաժ. |
|---|---|---|
| Կրօն . . . | 2 | 2 |
| Հայոց Լեզու . . | 5 | 5 |
| Ռուսաց Լեզու . . | 4 | 6 |
| Թուաբանութիւն . . | 4 | 4 |
| Նկարչութիւն . . | 1 | 1 |
| Երգեցողութիւն . . | 2 | 2 |
| Ձեռագործ . . | 1 | 1 |
| Ընդամենը . | 19 | 21 |

# ԴՐԱՄԱՐԿՂԻ ՀԱՇԻՒԸ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մնում էր դրամարկղում առ 1-ը սեպտեմբերի 1913 թ. . . . . | | | 50 | 86 |
| | **Անդամակցական վճարներ** | | | | |
| | Ստացուած է սոյն տարում անդամակցական վճարներ . . . . . | | | 136 | — |
| | **Նպաստներ** | | | | |
| | Թիֆլիսի Ժողովարանից . . . . | 100 | — | | |
| | Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնից 7-ին սեպտ. 1911 թուականին | 100 | — | | |
| | 13-ին յունիսի 1012 » | 100 | — | 300 | |
| | **Նուէրներ** | | | | |
| | Աղէքսանդր Մանթաշեանի ժառանգներից . . . . . . . . | 1000 | — | | |
| | Իշխ. Մարիամ Թումանեանից . . . | 25 | — | | |
| | Ամուս. Առաք. և Սոֆ. Աւագեաններից | 25 | — | | |
| | Հայր Սահակ և Վարվ. Սահակեաններից | 15 | — | | |
| | Մկրտիչ և Զարիկ Ղազարեաններից . | 10 | — | | |
| | Աղէքսանդր Ցիցիկեանից . . . . | 25 | — | | |
| | Կոստանդին Ղլիչեանից . . . . . | 10 | — | | |
| | Վասիլ Աւանեանից . . . . . . | 10 | — | | |
| | տ. Աղաւնի Ստեփանեանից . . . | — | 50 | | |
| | Գէորգ Բուռունսուզեանից . . . . | — | 50 | | |
| | Ե. Օ. Զանազեանից . . . . . | 15 | — | | |
| | Համբարձում Եսայեանից . . . . | 15 | — | | |
| | Վարսենիկ Եազուբեանից . . . . | 20 | — | 1171 | — |
| | Փոխանցումն . | | | 1657 | 86 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Օբլիգացիաներ Թիֆ. Քաղ. վարկի** | | | | |
| Գնուած են Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկերութեան 6 հատ օբլիգացիաներ մէկ հատ 1000 ր. և հինգ հատ 100 ր. գումարը 1500 ր. հետևեալ համարներով Литеральныя II раз. Б. № 17237, 15615, 15616, 15617, 15618, 15619, վճարուած է 85/25 կուրսով . . . . . . . | | | 1283 | 95 |
| **Ընկերութեան դպրոցը** | | | | |
| Տրուած է հինգ հոգուց բաղկացած ուսուցչական խմբին 1911/1912 ուսումնական տարուայ ռոճիկ . | 860 | — | | |
| Դպրոցի բնակարանին . . . . . | 96 | — | | |
| Գրքերի և դասարանակ. պիտոյքների. | 230 | 98 | 1186 | 98 |
| **Բանկային պայմանական հաշիւ** | | | | |
| Մտցրած է Թիֆլիսի Երկր. Փ. Վարկի Ընկերութեան բանկային պայմանական հաշիւ . . . . . . | | | 1850 | — |
| **Զանազան ծախսեր** | | | | |
| Վճարուած է 800 հատ տեղեկագիր, անդամակցական տոմսեր տպելու համար . . . . . . . . | 67 | — | | |
| Փայտի, յայտարարութիւնների և ուրիշ մանր ծախսերի . . . . . | 27 | 73 | 94 | 73 |
| **Զանազան անձինք** | | | | |
| Զանազան անձերից մուտք գրուած է, բայց չէ գանձուած, ապառիկներ | | | 85 | 83 |
| Փոխանցումն . | | | 4501 | 49 |

## ՄՈՒՏՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Փոխանցումն . | | | 1657 | 86 |
| Ստացուած է Նուէրներ գրքերի և դասարանական պիտոյքների համար | | | 175 | 50 |
| **Բանկային պայմանական հաշիւ** | | | | |
| Ստացուած է Թ. Երկ. Փ. Վ. Ընկ. բանկից պայմանական հաշւով . | | | 2170 | — |
| **Տօնածառ և գբօսանք** | | | | |
| Դեկտեմբերի 26 ին 1911 Թ. Թիֆլիսի Ժողովարանում դրած տօնածառից . . . . . . . . | | | 678 | 84 |
| Մայիսի 26 ին 1912 Թ. զբօսանքից Մուշէն էլերտրիկ. այգում մուտք . . . . . . . . . | 392 | 80 | | |
| Նուէր զբօսանքին Վարչութիւնից . | 75 | 94 | 468 | 74 |
| | | | 5150 | 94 |

## Դրամարկղի 1911|1912 Թ. — ԵԼՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Փոխանցումն . | | | 4501 | 49 |
| **Տօնածառ և զբօսանք** | | | | |
| Ծախսուած է Թիֆլիսի Ժողովարանում տօնածառ կազմակերպելու համար 26-ին դեկտեմբերի 1911 Թ. | 248 | 90 | | |
| Մուշէն էլէքտրիկ—այգում զբօսանք կազմակերպելու համար 26-ին մայիսի 1912 Թ. ծախք . . . | 284 | 86 | 533 | 76 |
| Մնում է դրամարկղում առ 1-ն սեպտեմբեր 1912 Թ. . . . . | | | 115 | 69 |
| | | | 5150 | 94 |

Հ.Ս.Խ.Հ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1004
15890

### Թիֆ. Երկ. Փոխադարձ Վարկ. Ընկ.

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մնացորդ առ 1-ն սեպտեմբ. 1911 Թ. | 345 | — | | |
| Մուծած է բանկը 1911/1912 Թ. . . | 1850 | — | 2195 | — |
| %% d. . . . . . . . | | | 7 | 92 |
| | | | 2202 | 92 |

### Պայմանակ. Ընթ. Հաշ. № 139

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ստացուած է բանկից 1911/1912 Թ. | | | 2170 | — |
| Մնացորդ առ 1-ն սեպտ. 1912 Թ. . | | | 32 | 92 |
| | | | 2202 | 92 |

## ՅՈՒՑԱԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ

## 1911/12 Թ.

### ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄ

1 Եփրեմ Եպիսկոպոս Սուքիասեան

### ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

2 Ալիխանեան Ղեւոնդ քահանայ
3 Աւագեան Սօֆիա
4 Աւագեան Առաքել
5 Աւագեան Մկրտիչ
6 Աւագեան Յակոբ
7 Աւանեան Վասիլ
8 Անտոնեան Միսակ
9 Արիստակէսեան Նունէ
10 Աթայեան Ջահանգիր
11 Ամբարդանեան Սրապիոն
12 Բէրեան Մարիամ
13 Բէնկլեան Հռիփսիմէ
14 Դաւթեան Աւետիս
15 Եսայեան Տիգրան
16 Եաղուբեան Վարսենիկ
17 Զարգարեան Նատալիա
18 Էլչիբէկեան Սաթենիկ
19 Իշխ. Մարիամ Թումանեան
20 Լեոնեան Գարեգին
21 Լիսինեան Նիկալայ
22 Խաչիկեան Ստեփան
23 Խուցեան Խորէն քահանայ

24 Ղլիչեան Վարսենիկ
25 Ղլիչեան Կոստանդին
26 Մեհրաբեան Ղեւոնդ քահ.
27 Մեհրաբեան Արտեմ
28 Մամաջանեան Ռուբէն
29 Մալխասեան Սաթենիկ
30 Յովսէփեան Աննա
31 Յակոբջանեան Վարվառէ
32 Նազարեան Սահակ
33 Շամչեան Եւգէնիա
34 Զաթալբաշեան Յովակիմ
35 Ռոստոմեան Սալոմէ
36 Սահակեան Հռիփսիմէ
37 Սաղաթելեան Մարգար
38 Ստեփանեան Աղաւնի
39 Վանցեան Մարիամ
40 Վարդանեան Վահագ
41 Տէր-Մելիտոսեան Համբարձում
42 Տէր-Մեսրովբեան Պետրոս
43 Տէր-Յովսէփեան Արշակ
44 Փաշայեան Արամ
45 Քոչարեան Կոստանդին

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

**1912/13 Թ.**

# Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

## 1912/13 ԹՈՒԻ

Այս տարում ևս նախկին Վարչութիւնը շարունակեց իր գործունէութիւնը և փակեց հաշիւները առանց դէֆիցիտի։ Պէտք է ասել, որ վերջին չորս տարուայ ընթացքում Վարչութիւնը իր հաշիւները փակել է ոչ միայն առանց վնասի, այլ և կարողացել է խնայել մի փոքրիկ գումար, որը 1913/14 թւին հասել է արդէն րուբ. 2100-ի տոկոսաբեր թղթերով։

Ընկերութեան Վարչութիւնը այդ տարիներում խուսափելով պարտքերից, աշխատել է կանխիկ վճարել այն ամենը ինչ որ գնել է, և խնայողութեան չափը, ծախսերի վերաբերեալ, հասցրել է մինումինի. այսպիսով, հնարաւորութիւն է ունեցել վճարելու ուսուցիչների ռոճիկները կանոնաւոր, նոյն իսկ առաջ, քան պարտաւոր է եղել։ Նոյն կարգով և դպրոցական միւս ծախսերը։

Այս 1911/12 և 1912/13 թւերին, նախորդ տարիների նման, Վարչութիւնը, աւելորդ ծախսեր չունենալու համար, չէ ունեցել իւր համար առանձին գրասենեակ և ծառայ, վարչական ժողովները և Ընկերութեան գործավարութիւնը տեղի են ունեցել պ. Ա. Աւագեանի բնակարանում, որտեղ շարունակւում են մինչև այժմ։
Այս տարում Կովկասեան Հայոց Բարեգործական Ընկերութեան ճաշարանից ձրի ճաշ են ստացել դպրոցի 15 երեխաներ, չնայած որ կարիքը շատ մեծ է եղել դպրոցի աշակերտների, և ցանկալի է, որ ճաշողների թիւը աւելի լինէր, քան թէ է։

Սոյն տարում Վարչութիւնը՝ Ծննդեան տօնի երեկոյեան ման է եկել Աւետիս, որից գոյացել է 149 րուբլու մի գումար։ Շնորհակալութեամբ պէտք է արձանագրել այստեղ, որ մեր հարուստներից շատերը ուրախութեամբ և սրտաբաց ձգում էին իրանց լուման

հայ որբ և չքաւոր երեխաների կրթութեան գանձանակը այդ երեկոյ։

Այս տարում Թիֆլիսում վախճանուեց հայ ականաւոր գործիչներից մէկը՝ բժ. Աղէքսանդր Ղազազեանը, որի թաղման ազահանդէսին Վարչութիւնը ներկայ եղաւ իր ամբողջ կազմով և նրա յիշատակը յաւերժացնելու համար որոշեց յանուն նորա պահել Ընկերութեան դպրոցում երկու հայ չքաւոր երեխայ, որը և իրագործուեց յետագայում. ընդունուեցան հետևեալները՝ Կիրակոսեան Մարիամ և Խազխազեան Տիգրան։

Սոյն տարուայ մուտքի և ելքի պատկերը հետևեալն է

## Մ Ո Ւ Տ Ք

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ստացուած է անդամավճարներից | 264 | — | | |
| » գրքերի փող | 287 | 30 | 551 | 30 |

### Նուէրներ

| | | | | |
|---|---|---|---|---|
| պ. Յովհաննէս Մութաֆեանից ի յիշատակ բժ. Աղ. Ղազազեանի | 200 | — | | |
| պ. Ռուբէն Դրամբեանից պսակի փոխարէն բժ. Աղ. Ղազազեանի | 20 | — | | |
| պ. պ. Եղբ. Տէր Մարգարեաններից ի յիշատ. Աղ. Ղազազեանի | 50 | — | | |
| պ. Աղէքսանդր Տիգրանեանից ի յիշատակ բժ. Աղ Ղազազեանի | 10 | — | | |
| տիկ. Վարվառա Վասիլևնա Թամամշեանից | 25 | — | | |
| Կոստանդին և Նատալիա Ցուրինովներից | 25 | — | | |
| Մուլէն էլէքտրիկի վարչութիւնից նուէր պրոժէկ. տոմսերով | 38 | 84 | | |
| Կուսանաց անապատի շնորհունակ կոյսեր՝ Աննա Խօջամիրնասեա- | | | | |
| | 368 | 84 | 551 | 30 |



| | | | | |
|---|---|---|---|---|
| | 368 | 84 | 551 | 30 |
| նից և Շուշանիկ Խարազեանից՝ ի յիշատ. հանգուց. կոյս իշխ. Սոֆիա Ամատունու | 10 | — | | |
| պ. Ներսէս Աբէլեանից ի յիշատ. վաղամեռիկ դստեր՝ Անահիտի | 10 | — | | |
| պ. Գրիգոր Իոսիֆովիչ Միրզոյեանից ի յիշատ. Ալէքսանդրա Դ. Սուքիասեանի | 25 | — | | |
| պ. Ջահան Աթայեանից ի յիշատ. Ալէքսանդրա Դ. Սուքիասեանի | 10 | — | | |
| օր. Վարվ. Խանկալամեանից նուէր | 5 | — | | |
| պ. Զաքար Դ. Մամուլեանից » | 3 | — | | |
| Շուշուց մի ոմն—Մշակի խմբագրութեան միջոցաւ | 5 | — | 436 | 84 |

### Նպաստներ

| | | | | |
|---|---|---|---|---|
| Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնից 1913 թուի նպաստը | 100 | — | | |
| Թիֆլիսի Քաղաքային Վարկի Ընկերութիւնից | 50 | — | | |
| Թիֆլիսի Ժողովարանից | 50 | — | 200 | — |

### Զանազան մուտքեր

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ընկերութեան պատկանեալ Թիֆ. Քաղ. Վ. Ընկ. օբլիգաց 1500-ի 1912 թ. %-ը | 71 | 25 | | |
| Աւետիս ման գալուց ստացուած է (Նուիրողների ցուցակը դրամարկղում) | 149 | — | 220 | 25 |
| Դրամարկղի մնացորդը առ 1 սեպտեմբեր 1912 թ. | | | 115 | 69 |
| Ընդամենը | | | 1524 | 08 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ր. | | | 1524 | 08 |

1912/13 թուի ծախսի յօդուածները

| | | | | |
|---|---|---|---|---|
| Դպրոցի դասատուների ռոճիկները | 962 | 68 | | |
| Դասագրք. և դասակ. պիտոյքների | 139 | 09 | | |
| Դպրոցի տարեկան վարձը | 96 | — | | |
| Փայտի, ջրի, հագուստեղէնի, տպագրութեան | 87 | 05 | | |
| Մուծած է II Փոխադ. Վարկի Ընկ. | 100 | — | 1384 | 82 |
| Դրամարկղի մնացորդը առ 1-ն Սեպտեմբեր 1913 թ. | | | 139 | 26 |
| Այսպիսով, 1913 թ. սեպտեմբերի 1-ին դրամարկղում մնում էր | | | 139 | 26 |
| Իսկ պայմանական ընթ. հաշւով II-րդ Փոխ. Վ. Ընկ. մէջ առ 1-ն սեպտ 1913 թ. | | | 142 | 30 |
| Ընդամենը | | | 281 | 56 |

## ԴՊՐՈՑԻ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

### 1912/13 ուսումն. տարուայ

Ընկերութեան դպրոցը այս տարում ևս տեղաւորուած էր նախկին շինութեան մէջ։ Ինչպէս միշտ, այս տարի ևս ուսումը սովորողների համար ձրի էր։ Տարուայ սկզբին Ա. բաժանմունքի համար կատարուեցան նոր ընտրութիւններ, խնդրատուների թիւը հասնում էր 80-ի, բայց տեղի սղութեան պատճառով հնարաւոր եղաւ դպրոց ընդունել միայն 49 հոգի. 48 հոգի Ա. բաժանմունքի համար, 1 հոգի Բ. բաժ. համար։ Դասերը սկսուեցան կանոնաւոր Սեմպտեմբերի սկզբին և տևեցին մինչ' Յունիսի սկիզբը։

Դպրոցը այս տարում բաղկացած էր երեք բաժանմունքից. Ա. Բ. և Գ. վերջին երկու բաժանմունքը միացեալ էին։ Երեք բաժանմունքներում աշակերտների թիւը 106 էր.



| | | | |
|---|---|---|---|
| Ա. բաժանմ. կային | 58 հոգի. | 32 տղայ | և 26 աղջիկ |
| Բ. » » | 27 » | 11 » | 16 » |
| Գ. » » | 21 » | 7 » | 14 » |
| Բոլոր բաժ. կային | 106 հոգի | 50 տղայ | և 56 աղջիկ |

Ուսուցչական մարմինը բաղկացած էր վեց հոգուց. 4 ուսուցիչ և երկու վարժուհի, որոնց ցանկը և աւանդած առարկաները ստորյիշուած աղիւսակից կերևայ։

Աւագ ուսուցչի պաշտօնը վարում էր պ. Յովսէփ Արարատեան, իսկ վերակացութեանը՝ տիկին Մարիամ Թաղիանոսեան, որպիսի պաշտօնների համար տրւում էր առանձին վարձատրութիւն։ Տարուայ վերջը տեղի ունեցան Ա. և Բ. բաժանմունքներում ստուգութիւններ, իսկ Գ. բաժանմունքում թեթև քննութիւններ, որոնք տուին հետևեալ արդիւնքը.

Ա. Բաժանմունքից փոխադրեցին Բ. բաժանմունք 30 հոգի. վերաքննութիւն ստացան 9 հոգի. դասարանում մնացին 13 հոգի։

Բ. Բաժանմունքից փոխադրեցին Գ. բաժանմունք 12 հոգի. վերաքննութիւն ստացան 9 հոգի. մնացին 3 հոգի։

Գ. Բաժանմունքը աւարտեցին 15 հոգի. մնաց դասարանում միայն մէկը։

Տարուայ ընթացքում դպրոցից հեռացան ուրիշ քաղաքներ տեղափոխուելու և հիւանդութեան պատճառով 12 հոգի. վախճանուեցան 2 հոգի։ Աւարտող աշակերտները ստացան վկայականներ, որոնցից մի մասը հնարաւորութիւն ունեցաւ մտնել ուրիշ դպրոցներ շարունակելու ուսումը, իսկ մի մասը ժանագիտական դպրոցներ արհեստներ սովորելու։

Դպրոցը ունէր իր գրադարանը 135 կտոր մանկական գրքերից բաղկացած՝ հայերէն և ռուսերէն լեզուներով։

Տարւայ ընթացքում, ազատ ժամերին դասարանական առանձին ընթերցանութիւն է եղել աշակերտների հետ, վարժուհի՝ տիկ. Մ. Թաղիանոսեանի ղեկավարութեամբ։ Բացի այդ՝ Բ. և Գ՝ բաժանմունքի աշակերտները վերցրել են գրադարանից գրքեր տանը կարդալու համար։ Գրադարանապետի պաշտօնը յանձնուած էր տ. Մ. Թաղիանոսեանին։

# 1912|13 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

| Կարգ. | Անուն և ազգանուն դասատուների | Ի՞նչ առարկաներ են աւանդել: Կրօն | Հ. լեզ. | Ռ. լեզ. | Թուաբ. | Բնագ. աշխ. | Նկար. | Երգ. | Ձեռ. | Շաբաթական դասեր. թիւը | Տարւայ մէջ բաց թողած դաս. թիւը | Աւել պարապած | Ի՞նչ ցենզ ունեն |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Յովսէփ Արարատեան | — | — | 11 | 8 | 2 | — | — | — | 21 | 13 | Ընթերցանութեան դասեր | Ուսուց. Շրջ. վկ. |
| 2 | Ղևոնդ քահ. Մէհրաբեան | 4 | — | — | — | — | — | — | — | 4 | | | Ներս. Հ. Հոգ. դպ. |
| 3 | Ղևոնդ քահ. Ալիխանեան | — | 6 | — | — | — | — | — | — | 6 | | | » » » |
| 4 | Տիկ. Մարիամ Թաղիանոսեան | — | — | — | — | — | 2 | — | 2 | 4 | | | Կարու ձևի մասն. դպ. |
| 5 | Երվանդ Սարդարեան | — | — | — | — | — | — | 4 | — | 4 | | | Թիֆ. Կայս. Եր. դպ. |
| 6 | Օր. Գոհարիկ Մելիք-Սարգսեան | — | 5 | — | — | — | — | — | — | 5 | | | Թիֆ. Գայեան. օր. » |
| | | 4 | 11 | 11 | 8 | 2 | 2 | 4 | 2 | 44 | 13 | 13 | |

| Ի՞նչ առարկաներ են անցել | Շաբաթական | |
|---|---|---|
| | Որքա՞ն դաս I բաժ. | Որքա՞ն դաս II և III բժ. |
| Կրօն | 2 | 2 |
| Հայոց Լեզու | 5 | 6 |
| Ռուսաց Լեզու | 5 | 6 |
| Թուաբանութիւն | 4 | 4 |
| Բնական Պատմ. և Աշխարհագ. | — | 2 |
| Երգեցողութիւն | 2 | 2 |
| Նկարչութիւն | 1 | 1 |
| Ձեռագործ | 1 | 1 |
| Ընդամենը | 20 | 24 |



| Կարգ. | ՑՈՒՑԱԿ 1912/13 ուսումն. տար. աւարտող աշակերտներին | №№ վկայական-ների |
|---|---|---|
| 1 | Աբգարեան Արտաշէս | 33 |
| 2 | Առաքելեան Եղիսաբէթ | 34 |
| 3 | Ասլանեան Շողակաթ | 35 |
| 4 | Թուլխաճեան Ներսէս | 36 |
| 5 | Կարապետեան Արմենուհի. | 37 |
| 6 | Կիրակոսեան Եղիսաբէթ | 38 |
| 7 | Միքայէլեան Հեղինէ | 39 |
| 8 | Մկրտչեան Շողակաթ | 40 |
| 9 | Զաքարեան Կարապետ | 41 |
| 10 | Յակոբջանեան Նունէ | 42 |
| 11 | Յարութիւնեան Շուշանիկ. | 43 |
| 12 | Յովսէփեան Աշոտ | 44 |
| 13 | Ոսկանեան Մկրտիչ | 45 |
| 14 | Վրդոյեան Մարիամ | 46 |
| 15 | Տէր-Թովմասեան Էլինար | 47 |

# ՀԱՇԻՒ

«ԼՈՅՍ» Ընկերութեան 1912|1913 թուի

## ՄՈՒՏՔ Հաշիւ

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1 | Մնում է դրամարկղում առ 1-ը սեպտեմբեր 1912 . . . | | | 115 | 69 |
| | **Անդամավճարներ** | | | | |
| | Ստացուած է անդամներից տարեկան վճարը . . . . | | | 264 | — |
| | **Նուէրներ** | | | | |
| | Գրքերի փող դպրոցին . . . | 287 | 30 | | |
| | Պրոժեկտորի տոմսերից . . | 38 | 84 | | |
| | Կոստանդին և Նատալիա Ցուրինովներից . . . . | 25 | — | | |
| | Յովհաննէս Մութաֆեանից . . | 200 | — | | |
| | Ռուբէն Դրամբեանից . . . | 20 | — | | |
| | Եղբ. Տէր-Մարգարեաններից . . | 50 | — | | |
| | Աղէքս. Տիգրանեանից . . | 10 | — | | |
| | Վառ. Վաս. Թամամշեանից . . | 25 | — | | |
| | Թիֆլիսի Ժողովարանից . . | 50 | — | | |
| | » Քաղ. Վարկի Ընկերութիւնից | 50 | — | | |
| | » » Վարչութիւնից . . | 100 | — | | |
| | Վարվառա Խանկալամեանից . . | 5 | — | | |
| | Զաքար Մամուլեանից . . . | 3 | — | | |
| | Կոյսեր Աննա Խօջամինասեանից և Շուշանիկ Խարազեանից . . | 10 | — | | |
| | Ներսէս Աբէլեանից . . . | 10 | — | | |
| | Մի ոմնից «Մշակ»-ի խմբագրութեան միջոցաւ . . . . | 5 | — | | |
| | Գրիգոր Միրզոյեանից . . | 25 | — | | |
| | Ջահան Աթայեանից . . . | 10 | — | | |
| | Ստացուած է Աւետիս ման գալուց՝ | | | | |
| | Աղէքսանդր Մելիք Ազարեանից . | 25 | — | | |
| | Յովհաննէս Մութաֆեանից . . | 20 | — | | |
| | Խաչատուր Աֆրիկեանից . . | 20 | — | | |
| | Աւան Իւզբաշեանից . . , | 20 | — | | |
| | Համբարձում Մելիքեանից . . | 20 | — | | |
| | Մնացական Խունունցից . . | 10 | — | | |
| | Գաբրիէլ Կաֆեանից . . . | 10 | — | | |
| | Առաքել Աւագեանից . . . | 10 | — | | |
| | Խուդիբէկ Էլչիբէկեանից . . | 5 | — | 1064 | 14 |
| | **Փոխանցումն .** | | | 1443 | 83 |

## Դրամարկղի 1912 1913 թ. ԵԼՔ

| | | | | |
|---|---|---|---|---|
| **Դպրոցի ծախք** | | | | |
| Վճարուած է ուսուցչական խմբին հինգ հոգուց բաղկացած 1912/1913 ուսումնական տարում . . | 962 | 68 | | |
| Վճարուած է դպրոցի բնակարանի վարձ | 96 | — | 1058 | 68 |
| Վճարուած է դասագրքերի և զանազան դասարանական պիտոյքների . | | | 139 | 09 |
| **Դպրոցի մանր ծախսեր** | | | | |
| Ջրի փող . . . . . | 8 | — | | |
| Փայտի . . . . . | 13 | 75 | | |
| 6 հատ աթոռի . . . . | 9 | — | | |
| Երեխաների գրոսանքը . . . | 13 | 65 | | |
| Զանազան մանր ծախքեր . . | 12 | 55 | | |
| Երեխաների ոտնամաններ . . | 9 | 90 | 66 | 85 |
| **Տպագրական ծախք** | | | | |
| Վճարուած է զանազան տպագրութիւնների . . . | 9 | 80 | | |
| » յայտարարութիւնների և ուրիշ մանր ծախքեր . . | 10 | 40 | 20 | 20 |
| **Բանկի հաշիւ** | | | | |
| Մտցրած է Թիֆլիսի Երկրորդ Փ. Վարկի Ընկերութեան բանկը պայմանական ընթացիկ հաշիւ | | | 100 | — |
| **Փոխանցումն .** | | | 1384 | 82 |

| ՄՈՒՏՔ | | | | | ԵԼՔ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Փոխադրութիւն . | | | 1443 | 83 | Փոխանցում. | 1384 | 82 |
| Բժ. Շահպարոնեանից . . . | 3 | — | | | Մնում է դրամարկղում առ 1-ը սեպտեմբեր 1913 թ. . . | 139 | 26 |
| Սահակ Լիսիցեանից . . . | 3 | — | | | | | |
| Եփրեմ Տատուրեանից . . . | 2 | — | | | | | |
| Պետրոս Ղամբարեանից . . | 1 | — | 9 | — | | | |
| Ստացուած է Թիֆլիսի Քաղաքային Տարկի Ընկերութեան տոկոսաբեր օբլիգացիաներից %% . | 71 | 25 | 71 | 25 | | | |
| | | | 1524 | 08 | | 1524 | 08 |

## Թիֆ. Երկրորդ Փոխադ. Վարկի

| | | | | |
|---|---|---|---|---|
| Մնացորդ առ 1-ը սեպտ. 1912 թ. | 32 | 92 | | |
| Մուծած է բանկը 1912/13 թուին | 100 | — | | |
| Ստացուած է %% 1912 թ. . | 9 | 38 | 142 | 30 |

## Ընկ. Պայմ. Ընթ. հաշիւ № 139.

| | | |
|---|---|---|
| Մնում է առ 1-ն սեպտեմբ. 1913 թ. | | |
| ի նոր հաշիւ փոխադրելի . . | 142 | 30 |
| | 142 | 30 |

## ՄՈՒՏՔ

| | | |
|---|---|---|
| Անդամակցական վճարներից . . | 300 | — |
| Ներկայացում, տօնածառ, գբօսանքից . | 800 | — |
| Թիֆլիսի Քաղաքային Վարչութիւնից . | 100 | — |
| Թիֆլիսի Ժողովարանից . . . | 100 | — |
| Զանազան նուէրներ . . . . | 400 | — |
| Տոկոսներ Ընկերութեան գումարի . | 100 | — |
| | 1800 | — |

## ԵԼՔ

| | | |
|---|---|---|
| Ուսուցչական խմբին ռոճիկ . . | 1200 | — |
| Դպրոցի վարձ . . . . . | 150 | — |
| Դասական պիտոյքներ . . . | 200 | — |
| Աշակերտների հագուստեղէն . . | 150 | — |
| Դպրոցի ծառային . . . | 50 | — |
| Տպագրական ծախք, փայտի, ջրի . | 50 | — |
| | 1800 | — |

Նախագահ Վարչութեան՝

Առաքել Աւագեանց

Փոխ-Նախագահ Վարչ.

Խորէն քահ. Խուլեան

Վարչութեան անդամներ

Վասիլ Աւանեան

Աւետիս Դաւթեան

Գանձապահ—Հաշուապահ

Կոստանդին Ղլիչեան

Քարտուղար՝

Ջահանգիր Աթայեան

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆ

Թիֆլիսի Որբ և Չքաւոր հայ երեխաներին օգնող «ԼՈՅՍ» Ընկերութեան Վերստուգիչ Յանձնաժողովի։

Վերստուգիչ Յանձնաժողովը քննելով «Լոյս» Ընկերութեան 1911/12 և 1912/13 թուերի հաշիւները, եկաւ հետեւեալ եզրակացութեան—

ա. Դրամական հաշիւները կանոնաւոր են և ամէն մի ծախս արուած է նպատակայարմար և ունի փաստաթուղթ։

բ. Ընկերութեան գրքերը, գործավարութիւնը, ինչպէս և անդամների հաշուեցուցակը տարուած են խնամքով։

գ. Դպրոցական գործը հնարաւորութեան սահմաններում տարուած է բարեխիղճ և եղել է արդիւնաւոր։

Իր այս գոհացուցիչ եզրակացութեամբ Յանձնաժողովս գտնում է, որ Ընկերութեան Վարչութիւնը ոչ մի ջանք չի խնայել իր ստանձնած պարտականութիւնը կատարելու, և որի համար արժանի է Ընդհանուր Ժողովի քաջալերութեան։

Վերստուգիչ Յանձնաժողովի

Նախագահ՝ Գարեգին Լեոնեան

Անդամներ՝ Մ. Սաղաթէլեան

Կ. Քոչարեանց

Թիֆլիս 22 Մարտի
1914 թ.

ՀԱԽՀ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
С.С.Р.А Публичная Библиотека
7/XI 1922
имени А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

## ՑՈՒՑԱԿ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ
## 1912/13 Թ.

### ՄՇՏԱԿԱՆ ԱՆԴԱՄ

1 Եփրեմ Եպիսկոպոս Սուքիասեան

### ՏԱՐԵԿԱՆ ԱՆԴԱՄՆԵՐ

2 Աբէլեան Ներսէս
3 Ադամեան Լեոն
4 Անտոնեան Միսակ
5 Աթայեան Ջահանգ. վարչ. անդ.
6 Աւագեան Սոֆիա
7 Աւագեան Առաքել նախ. վարչ.
8 Աւագեան Մկրտիչ
9 Աւագեան Յակոբ
10 Աւանեան Վասիլ վարչ. անդ.
11 Աւանեան Ռոստոմ
12 Աւետիսեան Նուարդ
13 Առոնեան Յարութիւն
14 Ամբարդանեան Սրապիոն
15 Ալիխանեան Ղևոնդ քահանայ
16 Արիստակէսեան Նունէ
17 Ալիբէկեան Նունէ
18 Ամիրաղեան Աղէքսանդր
19 Ամիրխանեան Յովսէփ
20 Բասենցեան Յակոբ
21 Բասենցեան Խաչատուր
22 Բալաղեան Սամուէլ
23 Բունիաթեան Շուշանիկ

24 Բոզարճեան Յովհաննէս
25 Բալեան Մկրտիչ
26 Գուլազեան տիկ. Վ.
27 Դանիէլեան Բէգլար
28 Դաւթեան Աւետիս վարչ. անդ.
29 Դէգուկեան Գրիգոր
30 Եսայեան Տիգրան
31 Եսայեան Համբարձում
32 Եարգուլեան Ստեփան
33 Զաքարեան Նատալիա
34 Զարգարեան Արիստակէս
35 Զուրաբեան Նիկողայոս
36 Էլչիբէկեան Սաթենիկ
37 Իշխ. Մարիամ Թումանեան
38 Թէոսեան Հայրապետ
39 Թաղիանոսեան Մարիամ
40 Լիսինեան Նիկալայ
41 Լիսիցեան Սահակ
42 Լեոնեան Գարեգին
43 Խարազեան Սարգիս
44 Խաչիկեան Ստեփան
45 Խանգուլեան Գէորգ
46 Խուցեան Խորէն քահ. փոխ.-նախ.
47 Կաֆեան Սարգիս
48 Կաճկաճեան Նիկողայոս
49 Կիրակոսեան Սեդրակ
50 Հայկազն
51 Հասրաթեան Սէնեքերիմ
52 Ղամբարեան Նունէ
53 Ղազազեան Աբրահամ քահ.
54 Ղլիչեան Վարսենիկ
55 Ղլիչեան Կոստանդ. գանձ. վարչ.
56 Ղուկասեան Գէորգ
57 Ճերմակեան Մանուկ



58 Մաղաքեան Մկրտիչ
59 Մամաջանեան Ռուբէն
60 Մալխասեան Սաթենիկ
61 Մարտիրոսեան Հայկանուշ
62 Մաղաքեան Գ. Ն.
63 Մարութեան Քրիստափոր
64 Մինասեան Աբգար
65 Մսերեան Յարութիւն
66 Մկրտչեան Մինաս
67 Մելքոնեան Սարգիս
68 Մելիք-Սարգսեան Գոհարիկ
69 Մեհրաբեան Ղեւոնդ քահ.
70 Յակոբջանեան Վարվառէ
71 Յարութիւնեան Սամսոն
72 Նաւասարդեան Բագրատ
73 Նազարեան Սահակ
74 Շահվերդեան Աղէքսանդր
75 Շիրինեան Կարապետ
76 Շահնազարեան Յակոբ
77 Չաթալբաշեան Յովակիմ
78 Պօղոսեան Աւետիս
79 Պապովեան Աղէքսանդր
80 Ռոստոմեան Սալոմէ
81 Ստեփանեան Աղաւնի
82 Սարդարեան Երվանդ
83 Սպենդիրեան Յովհաննէս
84 Սուլխանեան Մինաս
85 Ստեփանեան Սաթենիկ
86 Սաղաթելեան Մարգար
87 Վանցեան Յարութիւն
88 Վարդանեան Յակոբ
89 Վանցեան Մարիամ
90 Տէր-Մելիտոսեան Համբարձում
91 Տէր-Յովհաննիսեան Սաթենիկ
92 Քալանթարեան Աղէքսանդր Խրիստաֆ.
93 Քոչարեան Կոստանդին

2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0050404